



Հաստատված է

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և

Սպորտի պետական ինստիտուտ»

Հիմնադրամի գիտական խորհրդի

«27» 03 2019թ. № 10 նիստում

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառում գիտահետազոտական և նորաստեղծական գործունեության իրականացումը կրթական համակարգի զարգացման, կատարելագործման գլխավոր բաղադրիչներից մեկն է. ինչպես նաև Հայաստանի Հանրապետության որդեգրած գիտության զարգացման պետական քաղաքականության մարտահրավերներից մեկը:

Ներկայումս բուհերը դառնում են ոչ միայն նոր գիտելիք արտադրողներ, այլև դրա տարածման և կիրառման ակտիվ մասնակիցները՝ նորաստեղծական գործունեության միջոցով:

Ժամանակակից բուհերի բնորոշ կողմերն են՝

- Անցումը բարձրագույն մասնագիտական կրթության երեք մակարդակի. բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա, / դոկտորանտուրա/:
- Դասախոսների նշանակալի մասի մասնակցությունը գիտահետազոտական և նորաստեղծական գործունեությանը:
- Ուսանողների կողմից գիտահետազոտական և նորաստեղծական հիմնական հմտությունների տիրապետումը:
- Կրթական գործունեության միջազգայնացումը և միջազգային հետազոտական խմբերի ձևավորումը, փորձառությունների անցկացման արտասահմանյան գիտական կենտրոններում:
- Գիտական հետազոտությունների արդյունքների հրապարակումն արտասահմանյան առաջատար ամսագրերում, ժողովածուներում և պարբերականներում:

Ժամանակակից բուհերը լուծում են կարևոր խնդիրներ.

- Նոր գիտելիքի ստեղծում և մտավոր միջավայրի ձևավորում:
- Երիտասարդ մասնագետների ներգրավումը գիտական հետազոտություններում:

Վերոհիշյալ խնդիրների լուծումը ժամանակակից բուհերի զարգացման ռազմավարության բաղկացուցիչ մասն է, որն ուղղված է գիտության միջոցով կրթության կազմակերպմանը՝ մասնագետների, գիտական և գիտամանկավարժական կադրերի պատրաստման որակի բարձրացման նպատակով, գիտահետազոտական ծրագրերի իրականացման գործում բուհի գործունեության ակտիվացմանը:

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի գիտահետազոտական գործունեությունը միտված է ապահովելու կրթության որակի բարձրացմանը, գիտության հետ ուսումնական գործընթացների ինտեգրմանն ուղղված միջոցառումների մշակմանն ու ամրապնդմանը, գիտական և նորաստեղծական ինստիտուցիոնալ նոր կառույցների ստեղծմանը: Ինստիտուտի գիտահետազոտական գործունեության վերջնարդյունքն է. ձևավորել մրցունակ գիտական և նորարական ներուժ և աստիճանաբար անցում կատարել հետազոտական ինստիտուտի կարգավիճակին:

Ինստիտուտը գիտահետազոտական գործունեության ողջ գործընթացը կարգավորվում է նրա բոլոր ստորաբաժանումներում գործող ընդհանուր ռազմավարության ծրագրի համապատասխան՝

- ***Ընդլայնել դասախոսական և ուսանողական համակազմի ներգրավվածությունը հեղազոտական աշխատանքներում:***
- ***Նպաստել ակադեմիական համագործակցության ընդլայնմանը և հեղազոտական աշխատանքների միջազգայնացմանը:***
- Նպաստել ինստիտուտում գիտահետազոտական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Մշակել և ներդնել համապատասխան մեխանիզմներ տեղական և միջազգային ամսագրերում հոդվածների հրապարակումները խրախուսելու համար:
2. Խթանել միջառարկայական հետազոտությունները և դրանց համապատասխան սահմանել ներբուհական հետազոտության նոր առաջնահերթություններ:

3. Դիտարկել գիտահետազոտական և գիտատեղեկատվական գործունեությամբ զբաղվող ստորաբաժանումների միավորման նպատակահարմարությունը:
4. Աշխատանքներ տանել միջազգային հետազոտական համագործակցության և հետազոտական ցանցի ստեղծման ուղղությամբ:
5. Տանել աշխատանքներ տեղական և միջազգային դրամաշնորհային ծրագրերում ընդգրկվելու ուղղությամբ, վերջինիս միջոցներով ստեղծել գիտահետազոտական լաբորատորիաներ ժամանակակից սարքավորումներով:
6. Նպաստել ինստիտուտի գիտական դպրոցի կողմից ստացված արդյունքների ներկայացման և քննարկման նպատակով միջազգային և հանրապետական գիտաժողովների կազմակերպմանը ոլորտի տարբեր ուղղություններով:

Առաջընթացի գնահատման ցուցիչներն են.

1. Տեղական և միջազգային ամսագրերում հրապարակումների խրախուսման գործող կարգը: Հրապարակումների թվի աճ միջազգային գրախոսվող և բարձր վարկանիշ ունեցող ամսագրերում: Գիտական կոնֆերանսների մասնակիցների թվի աճ:
2. Միջառարկայական գիտահետազոտական աշխատանքների հաստատված թեմաների առկայություն բուհի հետազոտական առաջնահերթությունների ցանկում:
3. Ինստիտուտի գիտատեղեկատվական կենտրոնի գործառույթների միավորում գիտատեղեկատվական բաժնի գործունեության հետ:
4. Ինստիտուտի մշակված և հաստատված գիտական գործունեության վերաբերյալ մեթոդական ցուցումներ, ուր ներառված են միջազգային համագործակցության և հետազոտական ցանցի ընդլայնման խնդիրները:
5. Առնվազն մեկ դրամաշնորհային ծրագրի միջոցներով գիտահետազոտական կենտրոնի ստեղծում:
6. Ինստիտուտի գիտական դպրոցի կողմից ստացված արդյունքների հիման վրա կազմակերպված միջազգային և հանրապետական գիտաժողովների օրակարգեր և տպագրված նյութեր:

- **Նպաստել գիտահրատարակչական գործունեության արդյունավետության բարձրացմանը:**

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Ավելացնել ինստիտուտի դասախոս-գիտնականների արդիական և որակյալ աշխատանքների տպագրությունները:
2. Հիմնել համատեղ հրապարակվող պարբերականներ օտարերկրյա ուսումնական հաստատությունների հետ:
3. Նպաստել միջազգային բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում ինստիտուտի դասախոսների և հայցորդների գիտական նյութերի հրատարակմանը:
4. Մշակել գիտահետազոտական աշխատանքների սոցիալական ազդեցության գնահատման գործիքներ:
5. Ապահովել գիտահետազոտական ծրագրերում ասպիրանտների և մագիստրանտների մասնակցության ընդլայնում:
6. Ստեղծել միջազգային գործընկեր բուհերի հետ առցանց տեսակոնֆերանսների և սեմինար խորհրդակցությունների անցկացման սրահ:

Առաջընթացի գնահատման ցուցիչներն են.

1. Ինստիտուտի դասախոս-գիտնականների աշխատանքների տպագրությունների թվաքանակի աճ:
2. Օտարերկրյա ուսումնական հաստատությունների հետ համատեղ առնվազն երկու պարբերականների հրապարակում:
3. Միջազգային բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում ինստիտուտի դասախոսների և հայցորդների հրատարակված գիտական նյութերի ցանկ:
4. Գիտահետազոտական աշխատանքների սոցիալական ազդեցության գնահատման հաստատված գործիքներ և ընթացակարգ, ազդեցության գնահատման հաշվետվություններ:
5. Ասպիրանտների և մագիստրանտների մասնակցությամբ իրականացվող գիտահետազոտական ծրագրերի թվի աճ:

6. Ինստիտուտի և այլ ֆինանսական միջոցներով ստեղծված ժամանակակից սարքավորումներով հագեցված առնվազն մեկ տեսակոնֆերանսների կազմակերպման սրահ:

Խթանել ինստիտուտում հետազոտական գործունեության միջազգայնացումը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման համար անհրաժեշտ է.

1. Խորացնել և շարունակել արտասահմանյան գործընկերների հետ համագործակցությունը:
2. Ապահովել ինստիտուտի գիտամանկավարժական կադրերի կողմից մշակված նորարարությունների միջազգայնացումը:
3. Նախագծել և իրականացնել միջազգային համատեղ վերապատրաստման և որակավորումների բարձրացման ծրագրեր:
4. Նպաստել արտասահմանյան հաստատությունների գիտական կադրերի պատրաստմանն ու վերապատրաստմանն ինստիտուտի գիտական բազայի հիման վրա:

Առաջընթացի գնահատման ցուցիչներ.

1. Արտասահմանյան գործընկերների հետ համատեղ երկարաժամկետ գիտահետազոտական ծրագրերի առկայություն:
2. Ինստիտուտի գիտամանկավարժական կադրերի կողմից մշակված նորարարական մեթոդների և միջոցների ներկայացում միջազգային մասնագիտական պարբերականներում:
3. Առնվազն երկու միջազգային համատեղ վերապատրաստման և որակավորումների բարձրացման ծրագրերի առկայություն:
4. Ինստիտուտում առաջարկվող գիտահետազոտական ծրագրերում ներգրավված արտասահմանյան գիտական կադրերի աճ:

Քաղաքականության իրականացման հիմնական ուղղությունները

Քաղաքականությունը պահանջում է էապես փոփոխել բուհի գործունեության ոլորտը՝ ընդլայնելով հետազոտությունների կազմակերպումը, ինչպես բովանդակային,

այնպես էլ՝ մեթոդական: Գիտական հետազոտությունները և մշակումները պետք է դառնան յուրաքանչյուրի գործունեության հիմնական բաղադրիչներից մեկը:

Ուսանողների մասնակցությունը հետաազոտություններին հնարավորություն է տալիս.

1. Իրապես պատկերացնել և զարգացնել իրենց ապագա մասնագիտական գործունեությունը, իմաստավորել հիմնարար գիտելիքների յուրացման նշանակությունը:
2. Ձեռք բերել գործնական աշխատանքի փորձ:
3. Հստակեցնել իրենց ապագա մասնագիտական գործունեության ուղղությունը:

Գիտական հետազոտությունների կազմակերպման և կառավարման համակարգի փոփոխությունները ներառում են հետազոտությունների, մշակումների և մտավոր սեփականության պաշտպանության համար պատասխանատու ստորաբաժանուման ուժեղացում:

Ինստիտուտում անընդհատ պետք է ձևավորվի և կատարելագործվի նորաստեղծական ենթակառուցվածքը: Քաղաքականության իրականացման ընթացքում թերևս էլ ավելի զարգանան միջառկայական հետազոտություններն ու մշակումները:

Կադրային քաղաքականության հիմքում ընկած է. խրախուսել և նպատակային աջակցություն ցուցաբերել առավել արդյունավետ աշխատող գիտնականներին: Կձեռնարկվեն հետազոտողների և դասախոսների գիտական գործունեության աջակցության ծրագրային միջոցառումներ:

Ինստիտուտի գրադարանը կհագեցվի հայրենական և արտասահմանյան գիտական հրատարակություններով, ուսումնամեթոդական ձեռնարկներով և այլն:

Բարձրագույն կրթության երրորդ մակարդակը՝ ասպիրանտուրան, կվերափոխվի կդառնա իբրև բարձր որակավորման մասնագետների պատրաստման, նոր սերնդի գիտնականների ձևավորման, գիտական էթիկայի աջակցության ժամանակակից կենտրոն: